ՀՀ ԿԳՄՄՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՌՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ «Հայկական հարցի միջազգայնացումը թեման և դասավանդման մեթոդիկան»

Մասնակցի անուն, ազգանունը՝ Մարդոյան Անահիտ

Դպրոցը՝ Արարատ քաղաքի ավագ դպրոց

Դասավանդած առարկան՝ Պատմություն

Արարատ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Հայկական հարցի միջազգայինացումը 4
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 12
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 13
Թեմայի դասավանդման մեթոդիկան 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը՝ Հայկական հարց. Օսմանյան և Ռուսական կայսրությունների տիրապետությունից Հայաստանի ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման ու ամբողջ Պատմական Հայաստանում սեփական պետականության վերականգնման, իր Հայրենիքում, սեփական պետականության սահմաններում հայ ժողովրդի համախմբման և այդ նպատակներին հասնելու համար հայ ժողովրդի մղված ազգային-ազատագրական պայքարի անվանումը դիվանագիտության պատմության մեջ: Ըստ խորհրդահայ պատմագրության՝ Հայկական հարցը ասպարեզ է եկել որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս 1877-1878 թթ.-ի ռուս-թուրքական պատերազմից հետո: Հայկական հարցի ուսուցման նպատակն է զարգացնել Հայկական հարցի մասին աշակերտների գիտելիքները, խթանել աշակերտների մեջ հայրենասիրության զգացումը, կատարելագործել մեր աշակերտների գիտելիքների պաշարը:

Աշխատանքը շարադրելիս կիրառվել են ինչպես ընդհանուր մեթոդները՝ դիալեկտիկական, տրամաբանական, քննադատական, վերլուծական, այնպես էլ հատուկ մեթոդները, ինչպիսիք են՝ մանկավարժական, համակարգակառուցվածքային, հոգեբանական և սոցիոլոգիայի մեթոդները:

Հայկական հարցի միջազգայինացումը

Յուրաքանչյուր ժողովուրդ գոյատևելու և բնականոն կյանքով ապրելու համար պետք է ունենա իր ազատ և անկախ հայրենիքը: Հայրենիքը ժողովրդի պատմական բնակավայրն է: Հայրենիքի գաղափարի արդյունքները սկիզբ են առնում դարերի խորքում և ունեն պատմաէթնիկական բնույթ:

Սակայն ամեն մի բնակավայր դեռ հայրենիք չէ: Հողը հայրենիք է դառնում դարերի ընթացքում, երբ այն պատմում է ժողովրդի պարմամշակութային, ազգագրական, ճարտարապետական հուշարձաններով, նախնիների գերեզմաններով, երբ այն սրբագործվում է թշնամիների դեմ մշած պատերազմներում տարած հաղթանակներով և լեգենդար հերոսների թափված արյունով, երբ ձևավորվում են ազգային բնավորության գծերը, ազգային նկարագիրը, ավանդույթները, բարքերը, տարազը, լեզվական առանձնահատկությունները, ազգային ինքնագիտակցությունը, երբ այդ հողը ժողովրդի պատմական հիշողության մեջ է մտնում ազատագրական առասպելներով, էպոսով, երգերով, հեֆիաթներով ու հարազատանում հոգեպես, երբ ժողովուրդը դառնում է հոգևոր ամբողջություն: Ազատ հայրենիքն ու անկախ պետականությունը այն հզոր գործոններն են, որոնք ապահովում են ժողովուրդների բնականոն զարգացումը:

Այդ պատճառով էլ պայքարը Հայրենիքի ու անկախ պետականության համար վերածվում է գոյատևման, կենաց ու մահվան կռվի:

Պատմության կողմից չփայփայված ժողովուրդներն ազատագրական պայքարի դժվարին ճանապարհ են անցնում, մեծամեծ զոհեր են տալիս ազատ ու անկախ հայրենիք ունենալու համար:

Այդ պայքարի ճանապարհին ամեն մի ժողովուրդ անհրաժեշտորեն մշակում է իր ազգային գաղափարախուոյթյունը, որի հիմքում ընկած է Հայրենիքի, անկախ պետականության և ժողովրդի գոյատևման ու ազատ զարգացման գղափարը: Ազգային գաղափարախոսությունը ազգի ողնաշարն է, ազգի ոգին:

Հայ ժողովրդի՝ Հայրենիքի ազատագրության և անկախ պետականության վերականգնման համար մղած դարավոր պայքարը պատմության մեջ մտել է Հայկական հարց, Հայ դատ և Պահանջատիրություն անուններով:

Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարը առաջին հերթին պայքար է կորցրած Հայրենիքը ազատագրելու, անկախ պետականությունը վերականգնելու և հայ ժողովրդի գոյատևումը ապահովելու համար:

Կորցրած հայրենիքի ամեն մի մասի ազատագրման համար մղվող պայքարը հայկական հարցի բաղկացուցիչ մասն է կազմում: Հայոց պատմության արդի փուլում Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիավորման համար մղվող ազգային-ազատագրական պայքարը հայկական հարցի պատմության ամենափառավոր էջերից է:

Սակայն Հայկական հարցը միայն Հայրենիքի ազատագրման պահանջ չէ, նա նաև ազգային պահպանության, Հայրենիքի գաղափար է, Ազգային Մեծ Գաղափար, առանց որի ժողովուրդները դառնում են անհայրենիք, զրկվում պատմական հիշողությունից, կորցնում Հայրենիքի գաղափարը, վերածվում ազգային դեմք ու ոգի չունեցող ամբոխի և ցրվում աշխարհով մեկ՝ առաջնորդվելով «որտեղ հաց, այնտեղ կաց» կարգախոսով:

Ահա թե ինչու Հայկական հարցը հայոց ազգային գաղափարախոսության հիմքն է ու բովանդակությունը: Հայկական հարցից հրաժարվելը ու ազգային գաղափարախոսությունից, այդ նշնակում է հայ ժողովրդին դատապարտել անխուսափելի կործանման:

Հայկական հարցի պատմությունը սույն ուսումնասիրության մեջ մեր կողմից բաժանված է չորս հիմնական փուլերի: Աշխատության սահմանափակ ծավալը մեզ հնարավորություն չի տալիս մանրամասն վերլուծելու, պարզաբանելու, բնութագրելու Հայկական հարցի պատմության բոլոր փուլերը, ենթափուլերը և, որ ամենակարևորն է, այդ փուլերի բովանդակությունը կազմող բոլոր անհրաժեշտ իրադարձությունները:

Ուշադրությանն եմ ներկայացնում հայկական հարցի պատմության համառոտ ուրվագիծը:

Հայկական հարց

Հայկական հարցի բովանդակության մասին գիտական շրջանառության մեջ եղած տեսակետները բաժանվում են երեք հիմնական խմբի:

Հայկական հարցը համաձայն այդ տեսակետների՝

1. Ամբողջ Հայաստանի ազատագրության, հայ պետականության վերականգնման հարցն է:
2. Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցն է:
3. Արևմտահայության ֆիզիկական գոյության, կյանքի, գույքի ապահովության, Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցն է:

Ո՞րն է այդ տեսակետներից ճիշտը:

Յուրաքանչյուր ժողովրդի գոյապահպանման ու ազատ զարգացման համար ամենանպաստավոր պայմանները ստեղծվում են միայն անկախ Հայրենիքում, անկախ պետականության սահմաններում: Առանց հայրենիքի և անկախ պետականության ոչ մի ժողովուրդ չի կարող հարատևել և դատապարտված է ոչնչացման:

Հետևաբար, Հայկական հարցը-հայ ժողովրդի ազատագրության, իր պատմական հայրենիքում անկախ ազգային պետականության վերականգնման խնդիրն է:

Հայկական հարցի ծագումը

Հայկական հարցի ծագման մասին ևս գոյություն ունի երեք հիմնական տեսակետ:

1. Հին է այնքան, որքան հայ ժողովուրդը:
2. Ծագել է հայ պետականության անկումից հետո:
3. Առաջացել է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո առաջին անգամ իր արտահայտությունը գտնելով Սան-Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի պայմանագրերում:

Իմանալով Հայկական հարցի բովանդակությունը, մեզ համար դժվար չէ որոշել, թե երբ է առաջացել հայկական հարցը:

Հայկական հարցի զարգացման առաջին փուլ

Հայկական հարցը ժողովրդական գիտակցության արտահայտություն: Այս փուլում սկսում է ձևավորվել հայկական հարցը, այն աստիճանաբար դառնում է ժողովրդական գիտակցության արտահայտություն: Ծնունդ է առնում ազատագրական լեգենդը, արարվում է Սասունցի Դավիթ էպոսը: Ազատագրական լեգենդը Հայաստանի անկախության գաղափարի իրականացումը կապում էր

Արևմուտքի օգնության, իսկ Սասունցի Դավիթ էպոսը՝ ժողովրդի զինված պայքարի հետ: Նախագծվում են ազգային-ազատագրական պայքարի զարգացման հետագա ուղիները:

Այս փուլում կատարվում են ազատագրական պայքարի առաջին քայլերը, հայտնվում են առաջին դրոշակակիրները:

Էջմիածնում կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցու ղեկավարությամբ 1547թ. տեղի է ունենում գաղտնի ժողով, որը քննարկում է Հայաստանի ազատագրության հարցը: Ժողովի որոշմամաբ Ստեփանոս Սալմաստեցու ղեկավարությամբ 1549 թվականին պատվիրակություն է ուղարկվում Եվրոպա՝ Հայաստանին օգնելու խնդրանքով: Պատվիրակությունը լինում է Վենետիկում, Հռոմում, Գերմանիայում և Լեհաստանում, վերադառնում է անարդյունք:

Սեբաստիայում 1562թ. կաթողիկոս Միքայել Սեբաստացու ղեկավարությամբ տեղի է ունենում Հայաստանի ազատագրության հարցին նվիրված երկրորդ գաղտնի ժողովը: Այդ ժողովի որոշմամբ հայերին օգնելու խնդրանքով Աբգար Թոխատեցու ղեկավարությամբ մի պատվիրակություն էլ է ուղարկվում Հռոմ, որը ևս որևէ արդյունքի չի հասնում:

Այս փուլը, ինչպես տեսնում եմ, հայկական հարցի ծագման և ձևավորման շրջանն էր: Ազատագրական շաժումը հետագա ուղիների դեռևս վեհրերոտ որոշումներ էր կատարում: Չէին լուծված մարտավարության և ռազմավարության հարցերը: Ազատագրական շարժմանբ քաղաքական կողմնորոդման հիմնահարցը ևս գտնվում էր որոնումների շրջանում:

Երկրորդ փուլ

Հայկական հարցի այս փուլի համար հատկանշական է ազատագրական պայքարի զարթոնքը և վերելքը:

Ազատագրական շարժումը մեծ թափ է ընդունում ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան Հայաստանում: Հայոց ազատագրական, քաղաքական միտքը որակակն նոր մակարդակի է հասնում: Հանդես են գալիս գործիչները, որոնք իրենց ազգանվեր գործերով իրավունք են նվաճում հավերժ տեղ գրավելու հայոց պատմության էջերում: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ունենալով անհաջողություններ ու հուսախաբություններ, այնուամենայնիվ, հայոց մեծերը հետևողականությունը

վերականգնելու համար: Մշակվում էր ազատագրական պայքարի գաղափարախոսությունը:

Արևմտյան Հայաստան: 1662 թվականին սկիզբ է առնում և ծավալվում ազատագրական շարժումը Արևմտյան Հայաստանում: Շարժման դրոշակակիրներն էին՝ Խաչատուր Գաղատացին, Մահտեսի Մուրադը և այլոք: Արևմտյան Հայաստանի ազատագրական պայքարի առաջին դրոաշակակիրները փորձում էին Հռոմի պապի և Լյուդովիկոս 14-ի օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստանը: Այդ նպատակը իրականացնելու համար գրվեցին նամակներ և ուղարկվեցին պատվիրակություններ, Հայաստանի ազատագրության այդ փորձերն ավարտվեցին անհաջողությամբ:

Արևմտյան Հայաստան: Էջմիածնի 1677թ. ժողովով սկիզբ է առնում ազատագրական շարժումը Արևելյան Հայաստանում: Շարժման դոշակակիրներն էին՝ Մելիք-Իսրայելը, Հակոբ Ջուղայեցին, Կոստան բեյը և այլոք: Ծավալվում է ակտիվ գործունեություն: Հիմնական նպատակը մնում էր նույնը՝ Եվրապայի օժանդակությամբ ազատագրել Արևելյան Հայաստանը: 1682թ. մահանում է Հակոբ Ջուղայեցին, որով և ընդհատվում է արդեն ութ ամիս Պոլսում գտնվող հայոց պատվիրակության գործունեությունը:

Այս փուլի ավարտին ամբողջ Հայաստանի անկախ պետականության ստեղծումը թողնելով որպես ռազմավարական նպատակ, հայ ազատամարտի ղեկավարները, ամբողջ հայ ժողովուրդը գրեթե միակամորեն ընդունեցին ռուսական տիրապետությունը, որովհետև դրա մեջ էր հայ ժողովրդի փրկության, գոյատևման միակ ելքը: Ընդ որում, այդ պատմական վճիռը կայացնելիս նկատի էր առնվում այն հանգամանքը, որ ցարական Ռուսաստանը գաղութային կայսրություն է իր բոլոր բացասական հետեվանքներով:

Երրորդ փուլ

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմով Հայկական հարցը միջազգայնացվեց, մտավ միջազգային հարաբերությունների խաղացանկի մեջ: Սան-Ստեֆանոյում և Բեռլինի կոնգրեսում հայկական հարցը առաջին անգամ մտավ միջազգային պայմանագրերի մեջ: Հայկական հարցը միջազգային հարաբերությունների մեջ է մտնում, որպես Արևմտյան Հայաստանի հարց, որը և

պատմաբանների մի մասին հիմք է տվել նրա բովանդակությունը սահմանափակելու միայն Արևմտայն Հայաստանով:

Առաջին. Հայկական հարցը Արևելյան հարցի բաղկացուցիչ մասն է:

Արևելյան հարցը – Օսմանյան կայսրության թուլացման, թուրքերի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային անկախության համար մղված պայքարի և մեծ տերությունների մրցակցության ուժեղացումն է հիվանդ մարդու՝ թուրքիայի ժառանգությանը տիրելու համար: Եվ այդ առումով, բնականաբար, հայկական հարցը Արևելյան հարցի բաղկացուցիչ մասն էր:

Երկրորդ. Հայկական հարցը, լինելով Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը, սերտորեն առնչվում էր մեծ տերությունների նվաճողական շահերի, նրանց մրցակցություն և այլ բազմաթիվ հիմնախնդիրների հետ, որոնք դժվարացնում էին խնդրի լուծումը:

Հայկական հարցի հետ շատ սերտ կապ ունեն նաև հայ ազգային կուսակցությունները: Հայ ազգային կուսակցություններին ծնեց ազգային-ազատագրական պայքարը: Այդ կուսակցությունները կյանքի էին կոչվել Հայկական հարցը լուծելու համար:

Արմենական կուսակցություն – ստեղծվել է Վանում 1885թվականին, Մկրտիչ Ավետիսյանի գլխավորությամբ: Դա հայ առաջին քաղաքական կուսակցությունն էր:

Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն – ստեղծվել է 1887թ. Ժնևում: Հիմնասիրներն են՝ Ավետիս Նազարբեկ, Մարո Նազարբեկ, Ռուբեն Խանզատյան և այլոք: Հնչակը հայ իրականության առաջին ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն է: Հնչակյան կուսակցությունը պաշտոնապես սոցիալ-դեմոկրատական կոչվեց 1909 լվականին:

Հ.Հ. Դաշնակցություն – ստեղծվել է 1890 թ. ամռանը Թիֆլիսում: Հիմնադիրներն էին՝ Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը և Ստեփան Զորյանը:

Հայկական հարցի լուծման թուրքական կոնցեպցիան: Ցեղասպանությունը-հայկական հարցի լուծման թուրքական եղանակ:

Հայկական հարցի լուծման թուրքական եղանակներից մեկն էր պանթուրքիզմը:

Պանթուրքիզմ – Թուրքալեզու ժողովուրդների ազգային, ռասայական գաղափարախոսությունն է: Այդ գաղափարախոսության նպատակը եղել է Ադրիատիկ ծովից մինչև Չինաստան Թուրքալեզու ժողովուրդների համախմբումը մի պետական միավորման մեջ: Պանթուրքիզմի գղափարախոսությունը պիտի գործեր երեք փուլով:

Առաջին փուլ թուրքիզմ: Պանթուրքիզմի գաղափարները կարող են իրականացվել միայն հզոր Թուրքիայի միջոցով: Որպեսզի օսմանյան Թուրքիան կատարի իր պատմական դերը, նա ամենից առաջ պետք է թրքանա, պետք է հրաժարվի Պանօսմանիզմի գղափարներից: Օսմանյան թուրքիան թուրքերի հայրենիքն է, մյուս ժողովուրդները կամ պետք է թրքանան կամ էլ ոչնչացվեն:

Երկրորդ փուլ՝ օղուզականություն: Օղուզական պետության ստեղծում: Օղուզականությունը նշանակում էր թուրքմենների միացում: Թուրքիա, Ադրբեջան, Պարսկական Ադրբեջան պիտի կազմեն Օղուզիստանը: Նպատակներ ստեղծել թուրքերից կազմված մի ամբողջական պետություն:

Երրորդ փուլ՝ Պանթուրանիզմ: Երկրորդ խնդիրը կատարելուց հետո միայն Թուրքիան պետք է ձեռնամուխ լինի Միացյալ և անկախ թուրանի ստեղծմանը, որը պիտի տարածվի միջերկրական ծովից մինչև Խաղաղ օվկիանոս, Ջինաստանից մինչև Հյուսիսային օվկիանոս:

Թուրքական ռասայի բոլոր ճյուղավորումները միավորելու համար պետք է, ինչպես արդեն ասվեց ոչնչացվեր արևմտահայությունը և որպես նվազագույն պայման՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Զանգեզուրը և Ղարաբաղը պետք է անցնեին Թուրքիային, իսկ այդ տարածքների հայ բնակչությունը՝ ոչնչացվեր: Առավելագույնը ստեղծված իրավճիկակում Թուրքիայի համար ամբողջ հայ ժողովրդի և Հայաստանի ոչնչացումն էր այդ էր պահանջում Պանթուրքիզմի գաղափարախոսությունը:

1915-1916 թվականներին իրականացվեց արևմտահայության ցեղասպանության պանթուրքիստական ծրագիրը: Ոչնչացվեց մեկուկես միլիոն հայ: Արևմտյան Հայաստանի հայաթափվեց: Հայ ժողովուրդը 1915թ. եղեռնը անվանեց Մեծ եղեռն:

1918թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախ հանրապետությունը:

Չորրորդ փուլ

Հայկական հարցի չորրորդ փուլը իր մեջ ներգրավում է Առաջին Հայաստանի Հանրապետության, Խորհրդային Հայաստանի և 1991թ. անկախ ճանաչված Հայաստանի Հանրապետության ընթացքը և հայկական հարցի մոռացմանը:

Սակայն Հայկական հարցը կա դեռ մինչ օրս և հայերի հետ կշարունակի դեռ գոյատևել, քանի որ հայերը պետք է ուժ ունենան և ամտեն ինչ ետ բերեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Հետևաբար, Հայկական հարցը-հայ ժողովրդի ազատագրության, իր պատմական հայրենիքում անկախ ազգային պետականության վերականգնման խնդիրն է:
- Այսպիսով այս թեման այն թեմանիրեց մեկն է, որի մասին կարելի է խոսել անդադար, քանի որ այն ծավալուն է և շատ կարևոր ապագա սերունդների համար: Սակայան մեր հետազոտության միջոցով եկանք նման եզրահանգման, որ ուսուցում մեր առաջարկած մեթոդներով առավել արդյունակվետ կլինի այս թեման ուսուցանելու համար: Հայկական հարցը աշակերտների մեջ սերմանում է, ոչ միայն հայրենասիրություն ալև խոր կսկիծ է առաջացանում յուրաքանչյուր հայի սրտում, և այս թեման այն թեման է, որի շուրջ չես կարող անտարբեր անցնել առանց որևէ առնձնահատուկ մոտեցում տալու: Աշակերտների 90 % համակված էին դասի գործընթացով և լավ սերտեցին նոր նյութը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանը՝ ռուսական ֆաշիզմի զոհ։ GREAT ARMENIA 12 06 19։ AMGA TV, Ամերիկայի Միացեալ Նահանգներ։
2. Հ. Ղևոնդյան Պատմության դասավանդման մեթոդիկա , Երևան 2001թ։
3. Հայոց Դատ Թուրքիոյ և Ռուսիոյ դէմ… Մեծ Հայք 12-17-19 Great Armenia։ AMGA TV, Ամերիկայի Միացեալ Նահանգներ։
4. 2020 թուականը՝ Հայութեան համար հնարաւորութիւնների տարի։ GREAT ARMENIA 12 23 19։ AMGA TV, Ամերիկայի Միացեալ Նահանգներ։
5. 2020-ը՝ Հայոց Յաղթանակների Տարի։ ՄԵԾ ՀԱՅՔ 12-27-19 GREAT ARMENIA։ AMGA TV, Ամերիկայի Միացեալ Նահանգներ

Թեմայի դասավանդման մեթոդիկան

Դասավանդման ընթացքում մեթոդների հնարների կիրառումը նպաստում է աշակերտների մոտ դասի յուրացմանը, նյութի կամ թեմայի ավելի մատչելի հասկանալուն ու ամրապնդում է գիտելիքները;

Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները:

ՈՒսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակն ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Մեթոդները բաժանվում են բանավոր և գրավոր խմբի: ՈՒսուցման մեթոդները բազմազան են՝ կախված դասավանդվող առարկայից, դասինպատակից ու բնույթից

Պատմության դասավանդման ընթացքում մեթոդական ինչպիսի միջոցներ էլ կիրառվի կարևոր է ուսուցչի բանավոր խոսքը շեշտադրությունը , ներկայացման ձևը; Պատմության դասաժամերի ընթացքումպետք է աշակերտի մոտ ձևավորվի հայրենասիրություն, ազգային դաստիարակություն, պատմության համամարդկային հարցերի վերաբերյալ պատկերացումներ, հիմնախնդիրների վերաբերյալ վերհանում և վերլուծություն: Հայոց պատմություն առարկան տալիս է հայեցի մտածելու կարողություն, դաստիարակում է հայրենաիրությամբ: Մեթոդիկայի հիմնական խնդիրը սովորեցնելն է, կոնկրետացնում է ուսուցչի աշխատանքը ըստ դասարանների և դասերի: Պատմական նյութի բովանդակությունից ելնելով՝ հաշվի առնելով սովորողների ճանաչողական կարողությունները, ուսուցիչը ընտրում է դասավանդման ձևեր ու մեթոդներ, հնարներ դասի արդյունավետությունը բարձրացնելու, գիտելիքների հաղորդման ու աշակերտների հեշտ յուրացման համար[2]:

Օգտվելով սմարթ(էլեկտրոնային) գրատախտակներով աշակերտների համար ուսուցումը դարձնում եմ ավելի ակնառու, և ժամանակակից ուսուցման մեթոդներով սույն թեմայի ուսուցումը աշակերտների համար դառնում է ավելի հետաքրքիր և ավելի դյուրըմբռնելի:

Մտագրոհ մեթոդով վերհիշել անցածը:

Դասախոսության մեթոդով աշակերտներին մատուցվում է նոր դասը: Եվ անցկացնում եմ քննարկում նոր նյութի վերաբերյալ: Այս փուլում դասախոսությանը համընթաց նաև աշակերտների համար ներկայացնում եմ տեսասահիկ(սլայդ): Խոսում եմ նաև հայկական հարցի վերաբերող պատմական փաստերի մասին, որոնք անդադար կատարվել են տարիներ շարունակ: Սրանք բոլորը իհարկե տեսասահիկում ներառված և ներկայացված են: Որոնց մասին գիտելիք եմ տալիս նաև աշակետներին

Կատարվում է ԳՈՒՍ մեթոդով գիտելիքների ամփոփում: Թեման լավ յուրացնելու համար դասի վերջում կատարում եմ նաև խմբային աշխատանք(խառը) խմբերով: Խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է Հայկական հարցի զարգացման տարբեր փուլեր: Խմբային ուսուցման ձևը նպաստում է աշակերտների միասնական և համագործակցային աշխատանքին:

Խմբերից մեկում աշակերտները ըստ թվականների բաժանել էին իրադարձությունները և ներկայացնում էին աղյուսակի տեսքով:

Այսպիսով այս թեման այն թեմանիրեց մեկն է, որի մասին կարելի է խոսել անդադար, քանի որ այն շատ ծավալուն է: Սակայան մեր հետազոտության միջոցով եկանք նման եզրահանգման, որ ուսուցումը մեր առաջարկած մեթոդներով առավել արդյունակվետ կլինի այս թեման ուսուցանելու համար: Հայկական հարցը աշակերտների մեջ սերմանում է, ոչ միայն հայրենասիրություն ալև խոր կսկիծ է առաջացանում յուրաքանչյուր հայի սրտում, և այս թեման այն թեման է, որի շուրջ չես կարող անտարբեր անցնել առանց որևէ առնձնահատուկ մոտեցում տալու: Աշակերտների 90 % համակված էին դասի գործընթացով և լավ սերտեցին նոր նյութը: